ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ, Գրական դիմանկարներ, հոդվածներ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975, 430 էջ

Ժամանակակից հայ գրականագիտության և գրական քննադատության զարգացման մեջ իր որոշակի վաստակն ունի գրականագետ Հրանտ Թամրազյանը։ Օրերս նա ընթերցողի սեղանին է դրել իր նոր ժողովածուն, ուր զետեղված են գրականագետի վերջին տարիների աշխատությունները՝ նվիրված սովետահայ արձակագիրներ Ստ. Զորյանին, Ա. Բակունցին, Հր. Քոչարին, Հր. Մարևոսյանին, բանաստեղծներ Գ. Սարյանին, Հ. Շիրազին, Պ. Սևակին, Վ. Դավթյանին, Հր. Հովհաննիսյանին, գրականագետներ Ա. Տերտերյանին, Ա. Ինճիկյանին, Հ. Սալախյանին, Ս. Աղարարյանին, Ա. Զաքարյանին և Ռ. Իշխանյանին։

Ժողովածուի ընդգրկումը, նրա թեմատիկ սահմանները լայն են ու բազմաբան։ Գիրքը ընթերցողին մտցնում է ժամանակակից գրականության բուն ընթացքի մեջ, հաղորդակից դարձնում գրաքննադատության արդի խնդիրներին և նրանց շուրջ ծավալված բանավեճերին։ Այն աչքի է ընկնում մի շարք առավելություններով՝ գիտական-տեսական ամուր հիմք, խոր վերլուծություն, ժամանակակից գրականագիտության մակարդակով գրական իրողությունների ամենալուրջ ընկալման միտում։ Գրականագետը հմտորեն զուգակցում է գրականության պատմությունը, տեսությունը և քննադատությունը, օգտվում այլ դիսցիպլինների՝ ստեղծագործության հոգեբանության, պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, արվեստների, տեքստաբանության ընձեռած հնարավորություններից, գրողին և գրական երկերը բազմակողմանի արժեքավորելու համար։ Նրան ևս, ինչպես նա գրել է գրականագետ Ա. Ինճիկյանի մասին, օգնության են հասնում այդ գիտությունները, այդ թվում նաև «կենսագիրն ու պատմաբանը, հոգեբանն ու քննադատը» (էջ 338)։ Ինչպես հայտնի է, ժամանակակից գրականագիտության կարևորագույն առանձնահատկությունն է գրական երևույթների կոմպլեքսային հետազոտությունը։

Գրականագետ Հր. Թամրազյանը այս հարցում ևս համընթաց է քայլում արդի առաջավոր գրականագիտության հետ։ Գրքում լայնորեն քննվում են Զորյանի, Բակունցի, Սևակի գեղարվեստական մտածողությունը, փիլիսոփայական խորհրդածությունները, գտնվում գրական երևույթների փիլիսոփայական և սոցիոլոգիական մեկնակետեր, խոր իմացությամբ բացահայտվում գրական երկերի, ստեղծագործությունների հոգեբանության նուրբ դրսևորումները։ Ըստ էության, ստեղծագործության հոգեբանության վրա է կառուցված Հովհաննես Շիրազի դիմանկարային բնութագիրը։ Խոսելով բանաստեղծի կերպարի բարդության, ընթերցողների և գրական քննադատության հետ ունեցած հակասական փոխհարաբերության մասին, հոգեբան-քննադատը գրում է. «Հենց սկզբից բանաստեղծի առաջին իսկ քայլերից ծայր առավ գրական բնույթի մի վեճ։ Բոլորն, իհարկե, ընդունում էին նրա ձիրքը, բայց ոչ բոլորին էին դուր գալիս տաղանդի նախասիրությունները, ուղղությունը և մտածողության եղանակը։ Եթե նայենք հարցի մեծ պատմությանը, ապա այս վեճը մինչև իսկ բնական էր։ Ստեղծագործական հոգեբանությունը տալիս է շատ փաստեր՝ սերունդների բնական հակասությունների մասին։ Բանաստեղծը, անդամ մեծ բանաստեղծը, իր ճանապարհը բացելիս մի փոքր խեթ է նայում անմիջական նախորդներին, իսկ ճանապարհը բացելուց, իր աշխարհը հաստատելուց հետո, ջերմանալով նախորդների նկատմամբ, արդեն մի փոքր կասկածով և խեթ է նայում նորեկներին, որոնք դեմդիմաց փորձում են ստեղծել իրենց աշխարհը» (էջ 199)։

Ինչպես վկայում է այս գիրքը, գրականագետի գլխավոր նպատակներից մեկն է դառնում գրողի տաղանդի, անհատականության, գեղարվեստական ձևերի ինքնատիպության վերհանումը, երկերի քննությունը գաղափարական և գեղարվեստական ամբողջության, ձևի և բովանդակության միասնության մեջ, վերլուծության ու համադրության ներդաշնակումը։ Մյուս կողմից գրական իրողությունները հետազոտվում են տիպաբանական սկզբունքով, այսինքն՝ դրանք առնվում են պատմական կոնկրետության, սոցիալական իրականության մեջ, գրական տվյալ

լասպի զարգացման համապատասխան, որոշվում գրական պրոցեսի օրենքներն ու օրինաչափությունները, նշվում ոչ միայն տարբեր գրողների և գրական ստեղծագործությունների առանձնահատկություններն ու յուրահատկությունները, այլև նրանց միջև եղած կապերը, առնչությունները, նմանությունները և ընդհանրությունները։

Այս սկզբունքով նա ցույց է տալիս արձակագիրներ Դեմիրճյանի, Ջորյանի, Բակունցի, Մաթևոսյանի, բանաստեղծներ Տերյանի, Չարենցի, Սարյանի, Շիրազի, Սևակի և ուրիշների ընդհանրությունները՝ նույն աշխարհայացքը, որոշակի ձիրքը, հաճախ նույն թեման, գրականության հանդեպ խոր պատասխանատվությունը, աշխատասիրությունը, համառությունը և այլն, սակայն ընդգծում է նրանց ստեղծագործական տարբերությունները, խոր անհատականությունը, ուրույն խառնվածքը և ոճը։ Դեմիրճյանը, օրինակ, հակված էր դեպի խոհականությունը և ուներ ընդգծված փիլիսոփայական թեքում, Ջորյանի մոտ ուժեղ էր էպիկական պատումը, աշխարհի շոշափելի առարկայական ընկալումը, Ակսել Բակունցը արձակի նրբագեղությանը և դրամատիզմին ավելացնում է ջերմ, խոր, հուզական քնարականությունը, Գ. Սարյանը վոքր նյութի մեջ հայտնագործում է մեծ զգացմունք, նրբությամբ բերում առօրյայի շունչը, սովորական նյութը դարձնում բանաստեղծություն, պատկերում մարդու ներաշխարհը, հույզերը, հոգեբանությունը։ Շիրազի պոեզիայի մեջ որոշակի ընդգծվում է բանաստեղծի ինքնուրույն աշխարհը, նոր հայացքն ու ոգին, ներքին տագնապը, սիրո տիեզերական բաբախը՝ արտահայտված հատուկ փայլով ու պայծառությամբ, շքեղ պատկերներով ու սրտառուչ երգերով։ Սևակի համար բնորոշ է դրամատիկ շեշտով աշխարհի տառապանքի ողբերգության պատկերը, գառն հնգնանքով հոգու կեղտի, արատի, փոքրության ձաղկումը, լույսի, վեհի ու գեղեցկի պանծացումը, նոր եզերքների այրող կարոտը և այլն։

Գրականագետը մի անգամ ևս ապացուցում է, որ անհատականի և տիպաբանականի ընկալումը միասնության մեջ միանգամայն ճիշտ ճանապարհ է գրողի և նրա երկի գիտական մեկնաբանման համար։ Սովետական գրականագիտության մեջ մինչև հիմա էլ կա այն կարծիքը, թե գրական քննադատությունը ոչ թե գիտություն է, այլ արվեստ. նման տեսաբանները չնչում են արվեստի և քննադատության սահմանները։ Հետևանքը լինում է այն, որ գրական լեզուն փոխարինվում է արվեստի պատկերային ոճով՝ հաճախ պասսիվ նկարագրությամբ։ Ոմանք էլ քննադատությունը դիտելով որպես սոսկ գիտություն, հրաժարվում են արվեստի հնարանքներից, կենդանի, պատկերավոր ու հյութեղ լեզվից ու ոճից, գրում են չոր ու ցամաք, սառն ու անտարբեր, առանց կրքի, հույզի և զգացման։

Թամրազյանը հեռու է նման ծայրահեղությունից։ Նրա համար «քննադատությունը և՛ արվեստ է, և՛ գիտություն»։ Պատահական չէ, որ նրա հոդվածներից մեկը՝ նվիրված քննադատ Ս. Աղաբաբյանի «Ակսել Բակունց» գրքին, ունի «Քննադատությունը գիտության և արվեստի ճանապարհին» իմաստալից խորագիրը։ Թամրազյանի աշխատությանը բնորոշ է խստագույն գիտականությունը, վերլուծության և համադրության, փաստի և նրա իմաստավորման զուգակցումը, եզրահանգումների և գրական տերմինաբանության ճշգրտությունը, հետազոտության ու շարադրանքի գիտական տրամաբանությունն ու համոզչությունը։ Այդ ամենին քննադատը հասնում է նաև արվեստի հնարանքների, պարզ, իմաստալից, կենդանի, պատկերավոր լեզվի ու ոճի օգտագործման շնորհիվ։ Արձակագիր Հր. Մաթևոսյանի շուրջն ընթացող տարամերժ վեճերի առիթով Թամրազյանը գրում է. «Որքան բնական է այդ վեճը, նույնքան անբնական է հենց սկզբից դրսևորվող շարությունը՝ նոր ծլարձակող մի ձիրքի, մի դալար ծառի նկատմամբ, որը նկատելի միտում ունի բարձրանալու և տարածվելու» (էջ 154)։ Կամ՝ անդրադառնալով նրա ստեղծած բնավորություններին, քննադատը նշում է. «Մարդիկ են... Սարերի պես խիստ, սարերի պես բարի, կարկտաբեր ամպի ու սարից սար կամար կապող ծիածանի պես։ Ամեն ինչ նման է կյանքին դառն ու հաճելի, կանացի ու դրամատիկ, և հարազատ, շատ հարազատ սարերից էլ դեռն ապրող մարդկանց» (էջ 159—160)։

Թամրազյանը իր հիմնական խնդիրը համարելով գրական իրողությունների խոր վերլուծությունը, ներքին օրինաչափությունների բացահայտումը, խորամուխ է լինում երևույթների էության մեջ, տալիս համոզիչ, տրամաբանական բացատրություններ և շատ բարդ թվացող հարցերը մեկեն դարձնում հասկանալի ու ըմբռնելի բոլորի համար։ Խոսելով Պ. Սևակի վաղ շրջանի որոնումների մասին և նշելով այն, որ բանաստեղծը, չնայած իր որոշակի տաղանդին, բավական ուշ հասկացվեց ու գնահատվեց, քննադատը այդ բացատրում է այսպես. «Առաջին տասնամյակին բանաստեղծը շատ էր որոնում և ոչ միշտ էր նոր ճանապարհի վրա հասնում բուռն շիկացման ու ձևի կատարելության... Նոր մտքերը, ոճը, գրական խառնվածքի յուրատեսակությունը պահանջում են տևական ճիգեր ու ժամանակ՝ դեռ անսովոր ընթերցողների ներաշխարհը

նվաճելու համար» (էջ 232—233)։ Նա հոգեբանական բացատրություններ է տալիս նաև դասական ավանդների վերաբերյալ որոշ բանաստեղծների (Վ. Տերյան, Ե. Չարենց, Պ. Սևակ և ուրիշներ) չափազանցված, ծայրահեղ, երբեմն ժխտական կարծիքներին։ Նրանց այդ վերաբերմունքը անցյալի արվեստի մեծ վարպետների նկատմամբ, դրում է քննադատը, «ենթարկվում էր մի տրամաբանության, մի ընդգծված միտումի, որը պատմության կողմից խորապես արդարացվում է։ Անբավարար լինելով գրական ընթացքից, նրանք ձգտում էին հայ բանաստեղծությունը բարձրացնել համաշխարհային առաջավոր արվեստի նորագույն նվաճումների մակարդակը, գույները խտացնում էին՝ երևույթի նշանակությունը ընդգծելու և տեսանելի դարձնելու նպատակով» (էջ 237—238)։ Իրենց այդ վարմունքով նրանք «ձգտում էին արագացնել հայրենի բանաստեղծության զարգացման ընթացքը, մի որոշ ժամանակ, մի որոշ առումով թուլացնել թանկագին կապանքները, կտրել կաշկանդող կապերը» (էջ 238)։ Նրանց հաջողվեց այդ ճանապարհին ստեղծել հենց այդ նոր որակը, բերել կենսականորեն անհրաժեշտ նոր խոսք։ Գրախոսվող գրքի հեղինակը նուրբ բացատրություններ է տալիս այն հարցին, թե ինչու մեր խորապես լավատեսական գրականության մեջ անցյալում այնուամենայնիվ զգալի տեղ են գրավել լալկանությունը, սիրտ ու նյարդեր մղկտացնող երկերը։ Համոզիչ են հնչում հայ գրականության մեջ սխեմատիզմի, ֆորմալիզմի, նեոռոմանտիզմի, իմպրեսիոնիզմի դրսևորումներին տրված բնութագրերը, ինչպես նաև այն հիմնավորումը, թե 1930—1940 թթ. անհատի պաշտամունքի շրջանում գրական քննադատությունը չէր կարող ունենալ հասարակական ու գեղագիտական խոր ազդեցություն և միայն վերջին երկու տասնամյակներին հասկանալի պատճառներով ձեռք բերեց ներգործող ու կազմակերպող մեծ դեր, նպաստեց գրական պրոցեսի առաջընթացին։ Այս գրքի արժանիքներից մեկն էլ նրա բանավիճային բնույթն է։ Քննադատը համարձակ վեճերի մեջ է մտնում և տրամաբանական առարկություններ անում այն քննադատներին, որոնք հայ գրականության մեջ բուն ազգայինը տեսնում են գյուղացիության կյանքը պատկերող երկերի մեջ, Ա. Բակունցին համարում գերազանցապես հին գյուղի երգիչ, Շիրազի պոեզիայի մեջ անտեսում խոհափիլիսոփայական երակը, Սևակին համարում ռացիոնալիզմի բանաստեղծ, մոռանալով, որ նրա պոեզիան հագեցված է խոր հույզերով և փիլիսոփայական իմացական ակնառու հարստությամբ, մտքի և հույզի բնական ներդաշնակությամբ։

Գրքում գտնում ենք մեր մի շարք գրողների և գրականագետների գրական դիմանկարներ (Ստ. Զորյան, Ա. Բակունց, Գ. Սարյան, Ա. Տերտերյան, Ա. Ինճիկյան և այլն)։ Դրանք դոկումենտալ ակնարկներ են մեր գրողների և գրականագետների գրական ստեղծագործական մտավոր ու անհատական կյանքի, հասարակական գործունեության վերաբերյալ և աչքի են ընկնում իրենց նպատակասլացությամբ, ամբողջականությամբ, գրականության ընդհանուր ֆոնի և գրական պրոցեսի հետ սերտ առնչությունների դիպուկ բնութագրումներով։ Թամրազյանը, խոսելով հանգուցյալ գրականագետ Ա. Ինճիկյանի մասին, նրա «Հովհաննես Թումանյան» աշխատությունը անվանում է լայն բացվող պատուհան բանաստեղծի անտեսանելի աշխարհի վրա, որով նա ասում է նոր խոսք, դրսևորում ձիրք, տևական աշխատանքի կարողություն, պատմության և արվեստի խոր իմացություն, այլև տալիս է տվյալ պահի և անվան համար շատ էական մի ուրիշ գործոնի ապացույց՝ «հարատև կապ հանճարի վաստակի հետ, սեր և նվիրվածություն» (էջ 335)։

Հր. Թամրազյանի այս գիրքը վկայում է, որ գրականագետը անկեղծաբար այրվում է արդի գրականության հրատապ պրոբլեմների հետազոտման բուռն ցանկությամբ, միաժամանակ դրսևորելով հմտություն և տեսական խոր բազմակողմանի պատրաստություն։

Ա. Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու